Key words - *secret photo, secret video recording, secret audio recording, admissibility of evidence, personal data, identification, ban on the use of evidence*

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒՑՄԻ ՆԵՐՔՈ

ԴԱՎԻԹ ՍԵՐՈԲՅԱՆ

Հայաստանի Հանրապետությունում ներկայումս օրենսդրական լայնածավալ փոփոխություններ են կատարվում. երկիրը անցնում է խորհրդարանական կառավարման, հիմնավորապես փոխվում են ՀՀ քաղաքացիական, քաղաքացիական դատավարության և դատական օրենսգրքերը, 2018 թ. հունվարի մեկին ուժի մեջ է մտել հարկային նոր օրենսգիրքը¹: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության² փոփոխություններով երկրի հիմնական օրենքի 59 հոդվածի 1-ին մասով արդեն նախատեսվում է, որ յուրաքանչյուր ոք ունի տնտեսական, այդ թվում՝ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք: Այս դրույթը գրեթե կրկնում է նախկինում գործող Սահմանադրության 33.1 հոդվածը, որը նույնպես ամրագրում էր «բիզնեսով»³ զբաղվելու սահմանադրական իրավունքը, սակայն մի էական վերապահումով. բանն այն է, որ գործող սահմանադրաիրավական նորմով յուրաքանչյուրին ազատորեն իրավունք է վերապահվում զբաղվելու տնտեսական, այդ թվում՝ ձեռնարկատիրական գործունեությամբ⁴, այսինքն՝ կատարված փոփոխություններով ձեռնարկատիրական գործունեությունն արդեն դիտվում է որպես տնտեսական գործունեության տարատեսակ: Ավելի վաղ նույն կերպ են վարվել նաև Ռուսաստանի Դաշնությունում. երկրի Սահմանադրության 34 հոդվածը մի փոքր այլ կերպ է շարադրված. յուրաքանչյուրին իրավունք է վերապահում իր

¹ Տե՛ս ՀՀՊՏ 2016.11.04/79(1259) հոդ.1038:

² Տե՛ս ՀՀՊՏ 2015.12.21/ Հատուկ թողարկում, հոդ. 1118:

³ «Ձեռնարկատիրական» և «գործարարական» եզրույթներից մենք նախընտրում ենք «գործարարական»-ը, սակայն ՀՀ Սահմանադրությունը և ՀՀ քաղաքացիական օրենսգիրքն օգտագործում են «ձեռնարկատիրական» եզրույթը, ուստի մենք հավատարիմ ենք մնում դրանց (մանրամասն տե՛ս **Դ. Մ. Սերոբյան**, «Տնտեսական գործունեության հասկացությունը սահմանադրական փոփոխությունների լույսի ներքո», «ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու», ԵՊՀ, գլխ. խմբ. Գ. Ս. Ղազինյան, Եր., 2017, էջ 210-230), <http://www.y-su.am/faculties/hy/Law/section/staff/page/3/person/David-Serobyen>

⁴ Սահմանադրությամբ «գործարար» եզրույթը այլ իմաստով է օգտագործվում. Սահմանադրության 86 հոդվածը նախատեսելով պետության քաղաքականության հիմնական նպատակները՝ դրանցից մեկն էլ ամրագրում է գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը:

ունակություններն ու գույքն օգտագործել ձեռնարկատիրական և օրենքով չարգելված այլ տնտեսական գործունեությամբ զբաղվելու համար⁵: Ինչպես նկատում ենք, այստեղ կարելի է ընդգծել երեք հանգամանք. **նախ**՝ ձեռնարկատիրական գործունեությունը տնտեսական գործունեության տեսակ է, **երկրորդ**՝ տնտեսական գործունեության տեսակներից նախապատվությունը տրվում է ձեռնարկատիրական գործունեությանը, **երրորդ**՝ ռուսական սահմանադրական նորմը իրավունքի սուբյեկտին ձեռնարկատիրությամբ զբաղվելու նպատակով իրավունք է վերապահում օգտագործելու իր ունակություններն ու գույքը:

Այս առումով կարելի է փաստել, որ մեր Սահմանադրությունը լուրջ զարգացում է ապրել: Այսպես, օրինակ, նորանկախ Հայաստանում ընդունված Սահմանադրության⁶ 8 հոդվածը սահմանում էր, որ պետությունը երաշխավորում է սեփականության բոլոր ձևերի ազատ զարգացումը և հավասար իրավական պաշտպանությունը, տնտեսական գործունեության ազատությունը, ազատ տնտեսական մրցակցությունը: Դրանով դրվեց ձեռնարկատիրական գործունեության սահմանադրաիրավական հիմքը, որը պլանային տնտեսությունից շուկայական տնտեսության անցնելու բավականին խթանող քայլ էր: Այնուհետև 27.11.2005 թ. կատարված փոփոխություններով ՀՀ Սահմանադրությունը լրացվեց նոր՝ 33.1 հոդվածով, որտեղ ամրագրվեց, որ յուրաքանչյուր ոք ունի օրենքով չարգելված ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք⁷: Ինչպես նկատում ենք, 2005 թ. կատարված լրացումը թեև առաջընթաց էր ձեռնարկատիրական գործունեությունը սահմանադրական մակարդակով կարգավորելու գործում, այնուամենայնիվ այսպիսի բովանդակությամբ սահմանադրական նորմը հաջողված համարել չի կարելի⁸:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի⁹ 2 հոդվածը, ինչպես հայտնի է, ձեռնարկատիրական գործունեությունը տնտեսական գործունեության տարատեսակ չի դիտում, ուստի խիստ կարևորվում են տնտեսական գործունեությունը դոկտրինալ հարթությունում ուսումնասիրությունը և վերլուծությունը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև դրա օրենսդրական ձևակերպումը, հակառակ պարագայում կխզվի կապը ձեռնարկատիրական գործունեության սահմանադրական հենքի և գործող օրենսդրության միջև, որն իր հերթին հնարավորություն կտա կամայականորեն մեկնա-

⁵ Տե՛ս <http://www.constitution.ru/10003000/10003000-4.htm>

⁶ Տե՛ս «ՀՀ Սահմանադրություն», ընդունվել է ժողովրդական հանրաքվեով 1995 թ. հունիսի 5-ին:

⁷ Տե՛ս ՀՀՊՏ 2005.12.05/ Հատուկ թողարկում, Հոդ. 1426:

⁸ ՀՀ Սահմանադրության 2005 թ. խմբագրությամբ 33.1 հոդվածը մեր կողմից մեկնաբանվել է (առավել մանրամասն տե՛ս «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ», ընդհանուր խմբագրությամբ Գ. Հարությունյանի և Ա. Վաղարշյանի., Եր., «Իրավունք», 2010, էջ 406-417):

⁹ Տե՛ս ՀՀՊՏ 1998/17(50) 10.08.98 (այսուհետ՝ նաև ՀՀ Քաղ.օր.):

բանելու ձեռնարկատիրական գործունեության էությունը:

Ինչպես նշվեց, մեր երկրի Սահմանադրության նախկին խմբագրության 8 հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում էին տնտեսական գործունեության ազատությունն ու ազատ տնտեսական մրցակցությունը¹⁰: Այսինքն՝ տնտեսական գործունեության ազատությունը դրսևորվում է ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու միջոցով: Ներկայումս ՀՀ քաղ. օր.-ի 114 հոդվածում այն հիշատակվում է բաժնետիրական ընկերության տնտեսական գործունեության արդյունքի իմաստով, այնուհետև նույն օրենսգրքի 275 հոդվածում՝ արտաքին տնտեսական գործունեության, իսկ 746 հոդվածում՝ կապալառուի օպերատիվ տնտեսական գործունեության հայեցակետից: Նոր ընդունված հարկային օրենսգրքը հարկ վճարողների գործունեության այս կամ այն կողմը քննարկելիս թեև կիրառում է այդ հասկացությունը, սակայն այդպես էլ չի բացահայտում դրա բովանդակությունը: ՀՀ հողային, ջրային, վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքերում¹¹ այդ եզրույթը հիմնականում օգտագործվում է համապատասխան ոլորտներում հարաբերությունները կարգավորելու նպատակով:

Այսպիսի օրինակների շարքը կարելի է երկար թվարկել, իսկ ի՞նչպիսին է վիճակը դատական պրակտիկայում: Դատական պրակտիկայում բազմաթիվ օրինակներ կան, երբ դատական ակտերում հիշատակվում է «տնտեսական գործունեություն» եզրույթը, սակայն ոչ մի պարզաբանում չի տրվում, թե ինչ է դա և ինչպես է հարաբերակցվում ձեռնարկատիրական գործունեության հետ¹²:

Այսպես, ՀՀ Սահմանադրական դատարանը ՄԴՈ-152 որոշմամբ անդրադարձել է տնտեսական գործունեության ազատությանը և տնտեսական ազատ մրցակցությանը¹³: ՄԴՈ-1131 որոշմամբ օգտագործվում է «սովորական տնտեսական գործունեություն» եզրույթը¹⁴, մեկ այլ գործով ՄԴՈ-1065 որոշմամբ դատարանը գտել է, որ «...տվյալ դեպքում ընդհանուր օրյեկտը ոչ այնքան կառավարման համակարգն է, որքան տնտեսական գործունեությունը, և իրավական կարգավորում-

¹⁰ Տնտեսական գործունեության ազատությունը նշանակում է իրավաբանորեն երաշխավորված հնարավորություն՝ ազատորեն օգտագործելու սեփական ընդունակություններն ու գույքը օրենքով չարգելված տնտեսական գործունեության համար, այսինքն՝ իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն (տե՛ս «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ» ընդհանուր խմբագրությամբ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի, էջ 121):

¹¹ Տե՛ս ՀՀՊՏ 2001.06.15/17(149), ՀՀՊՏ 2002.07.10/24(199), ՀՍՍՀԳՍՍ 1985/23:

¹² Տե՛ս, օրինակ, ԵԿԴ/0223/07/14 քրեական գործով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ասյանի դատարանի վճիռը, կամ ԵԿԴ/0807/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճարելի դատարանն իր իրավական դիրքորոշումն արտահայտելիս օգտագործել է «տնտեսական կամ ձեռնարկատիրական գործունեություն» արտահայտությունը:

¹³ Տե՛ս <http://www.concourt.am/armenian/decisions/common/1999/sdv-152.htm>

¹⁴ Տե՛ս <http://www.concourt.am/armenian/decisions/common/2013/pdf/sdv-1131.pdf>

ներն էլ պետք է միտված լինեն մրցակցային, ազատ տնտեսական գործունեության երաշխավորվածությանը»¹⁵:

ՀՀ վճռաբեկ դատարանը, հիմնվելով «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 2, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի¹⁶ 26, «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի¹⁷ 24 հոդվածների դրույթների վրա, հետևություն է արել, որ «...նկատի ունենալով դատավորի՝ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու սահմանադրական արգելքը, դատավորին թույլատրելով լինել ընկերության մասնակից կամ ավանդատու, օրենսդիրը տնտեսական գործունեության այդ տեսակները չի դիտել որպես ձեռնարկատիրական գործունեության տարրեր», այսինքն՝ ՀՀ վճռաբեկ դատարանն իր հերթին տնտեսական ընկերությունում մասնակցությունը չի դիտում ձեռնարկատիրական գործունեություն, սակայն այն համարում է տնտեսական գործունեություն¹⁸, բայց այդպես էլ չի սահմանում «տնտեսական գործունեություն» հասկացությունը և չի բացահայտում դրա բովանդակությունը:

Այսպիսով, կարելի է փաստել, որ ո՛չ նորմատիվ ակտերը, ո՛չ էլ դատական պրակտիկան այդպես էլ չեն բացահայտում «տնտեսական գործունեություն» հասկացությունը, դրա բովանդակությունը, բնորոշ հատկանիշները և սուբյեկտներին, այլ պարզապես անդրադառնում են այս կամ այն դրսևորմանը, և, որպես հետևանք, չեն բացահայտվում նաև կապը և հարաբերակցությունը ձեռնարկատիրական գործունեության հետ: Նշված հարցերին մանրամասն անդրադարձ նախկինում կատարել ենք¹⁹, ուստի, հաշվի առնելով, որ «տնտեսական գործունեություն» և «ձեռնարկատիրական գործունեություն» եզրույթները լայնորեն կիրառվում են օրենսդրի և դատարանների կողմից, միաժամանակ միասնական մոտեցման բացակայությունը հանգեցնում է կամայական, իրավիճակային լուծումների, սույն հոդվածի նպատակն ենք համարում գործունեության այդ տեսակների փոխադարձ կապի դոկտրինալ պարզաբանումը:

Անշուշտ, տնտեսական և ձեռնարկատիրական գործունեության հարաբերակցության հիմնախնդիրը պահանջում է հստակություն. ձեռնարկատիրական գործունեության բոլոր մյուս բնութագրիչները ածանցվում են դրանից: Այս իմաստով ելակետային և շատ կարևոր դրույթ է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 59 հոդվածի 1-ին մասով սահմանված նորմը, համաձայն որի՝ ձեռնարկատիրական գործունեությունը տնտեսական գործունեության տեսակ է:

¹⁵ <http://www.concourt.am/armenian/decisions/common/2013/pdf/sdv-1065.pdf>

¹⁶ Տե՛ս ՀՀՊՏ 1997.05.20/11:

¹⁷ Տե՛ս ՀՀՊՏ 2002.01.09/1(176), Հոդ. 1:

¹⁸ Ի դեպ, գործող Սահմանադրությունը ձեռնարկատիրական գործունեությունը դիտելով որպես տնտեսական գործունեության տեսակ փաստորեն դատավորին չի արգելում զբաղվել տնտեսական գործունեությամբ (տե՛ս Սահմանադրության 164 հոդվածը):

¹⁹ Տե՛ս **Դ. Մ. Մերոբյան**, նշվ. աշխ., էջ 210-230:

Մեր կարծիքով, Սահմանադրության մեջ այդ նորմը տեղ է գտել տեսական գրականությունում ձեռնարկատիրական գործունեությունը տնտեսական գործունեության տարատեսակ համարելու գերիշխող տեսակետի շնորհիվ: Այդպես է կարծում նաև ռուս տեսաբան Երշովան, որի կարծիքով՝ ձեռնարկատիրական գործունեությունը տնտեսական գործունեության տեսակ է և, որպես տեսակային հատկանիշ, ունի շահույթ ստանալու ուղղվածություն²⁰, իսկ Մամուտովը ընդգծում է, որ «տնտեսական գործունեություն» հասկացությունը ներառում է ձեռնարկատիրությունը, սակայն չի վերաժվում դրան²¹: Բելլիսը իր հերթին կարծում է, որ ձեռնարկատիրական և տնտեսական գործունեություն «խաչվող» հասկացություններ են. ամեն մի տնտեսական գործունեությունը չի կարող համարվել ձեռնարկատիրական²²: Լապտևը նշում է, որ տնտեսական գործունեությունը ավելի լայն հասկացություն է, քան ձեռնարկատիրականը: Ժամանակակից պայմաններում այն առավելապես ընդունում է ձեռնարկատիրական գործունեության ձև, սակայն կարող են լինել տնտեսական գործունեության այնպիսի տեսակներ, որոնք չունենան ձեռնարկատիրականին բնորոշ հատկանիշներ²³:

Մեր այս տեսակետը հիմնավորելու նպատակով, կարծում ենք, ճիշտ կլինի համեմատություն կատարել տնտեսական և ձեռնարկատիրական գործունեության հատկանիշների միջև:

Տնտեսական գործունեության հատկանիշները հետևյալն են՝

- տնտեսական գործունեությունը մարդկային գործունեության հանրօգուտ տեսակ է,

- տնտեսական գործունեության սուբյեկտներ են ֆիզիկական և իրավաբանական անձինք, որոնք այդ գործունեությունն իրականացնում են ինքնուրույն կամ համատեղ,

- տնտեսական գործունեության իրականացման արդյունքում ստեղծվում են դրամական արժեք ունեցող նյութական և հոգևոր բարիքներ,

- տնտեսական գործունեությունն իրականացվում է տնտեսության ոլորտում,

- տնտեսական գործունեության նպատակն է անհատների և հասարակության պահանջմունքները բավարարելը²⁴:

²⁰ Տե՛ս «Современное предпринимательское право» (автор главы – И. В. Ершова). М., 2014. էջ 79:

²¹ Տե՛ս «Хозяйственное право». Учебник. Киев, 2002, էջ 3:

²² Տե՛ս «Предпринимательское право России». Учебник (автор главы – В. С. Белых). М., 2008, էջ 21:

²³ Տե՛ս «Предпринимательское право: понятие и субъекты». М., 1997, էջ 18, «Предпринимательское право (хозяйственное право)». Учебник (автор главы – В. В. Лаптев). М., 2006, էջ 122:

²⁴ Տե՛ս **Դ. Մ. Սերոբյան**, նշվ. աշխ., էջ 227-228:

Ի տարբերություն տնտեսականի, ձեռնարկատիրական գործունեությունը տեսական գրականությունում մանրակրկիտ քննարկվել է: Մասնավորապես, ըստ պրոֆ. Բարսեղյանի՝ ձեռնարկատիրական գործունեության հատկանիշներն են մասնագիտական բնույթը, ինքնուրույնությունը, աշխատանքն իր ռիսկով կազմակերպելը և պարբերաբար շահույթ ստանալը²⁵: Իհարկե կարելի է այստեղ հիշատակել նաև այլ հեղինակների կարծիքներ, սակայն տեսության մեջ գերիշխող է այս տեսակետը: Տեսաբանները նշում են ձեռնարկատիրական գործունեության յոթ հատկանիշ, սակայն, բացի հիշատակվածներից, մնացյալը վիճահարույց է²⁶:

Այժմ համեմատենք տնտեսական և ձեռնարկատիրական գործունեության հատկանիշները: Երկուսն էլ մարդկային գործունեության տեսակ են, տնտեսական գործունեությունը հանրօգուտ, այսինքն՝ հանրության շահերից բխող գործունեություն է, իսկ ձեռնարկատիրականը կարող է լինել և՛ հանրօգուտ, և՛ որոշակի սուբյեկտի շահից բխող: Միաժամանակ, առանձնացնելով ձեռնարկատիրական գործունեության մասնագիտական բնույթը, կարելի է փաստել, որ երբեմն ավելի խիստ պահանջներ ներկայացնելով ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող սուբյեկտներին՝ նրանց գործունեության ոլորտը նեղացվում է, մինչդեռ տնտեսական գործունեության սուբյեկտների համար միշտ չէ, որ այդ գործունեությունը մասնագիտացված է: Այսպես, օրինակ, իր տնամերձ հողամասում բանջարեղեն աճեցնող սեփականատերը տնտեսական գործունեության սուբյեկտ է, սակայն նույն բանջարեղենը շահույթ ստանալու նպատակով մշակող ձեռնարկատիրոջ նկատմամբ ներկայացվում են ավելի խիստ պահանջներ: Սուբյեկտների մասով կարելի է ավելացնել, որ և՛ տնտեսական, և՛ ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտները իրենց աշխատանքը կարող են իրականացնել և՛ ինքնուրույն, և՛ համատեղ, ուստի այս պարագայում կարծես թե որևէ առանձնահատկություն չկա:

Երկու տեսակի սուբյեկտների գործունեության արդյունքում ստեղծվում են դրամական որոշակի արժեք ունեցող նյութական և հոգևոր բարիքներ, երկու դեպքում էլ գործունեությունն իրականացվում է տնտեսության ոլորտում, ուստի այս իմաստով այդ երկու տեսակների միջև տարբերություններ չեն նկատվում:

Ինչ վերաբերում է աշխատանքները իր ռիսկով կատարելուն, ապա ձեռնարկատիրական գործունեության դեպքում սա թե՛ տեսականորեն, թե՛ նորմատիվային առումով հաստատված պահանջ է, մինչդեռ տնտեսավարող ոչ բոլոր սուբյեկտներն են կրում անբարենպաստ հետևանքների ռիսկը, և եթե ձեռնարկատիրոջ համար այս հատկանիշը պարտադիր է, ապա տնտեսական գործունեություն իրականացնող

²⁵ Տե՛ս **S. Կ. Բարսեղյան**, Գործարարական իրավունք, Եր., 2001, էջ 33:

²⁶ Տե՛ս **Белых В. С.** Правовое регулирование предпринимательской деятельности в России. М., 2009, էջ 39:

սուբյեկտի համար անգամ ֆակուլտատիվ հատկանիշ չէ, այսինքն՝ տնտեսական գործունեության համար միշտ չէ, որ ռիսկը իրավական նշանակություն ունի:

Գործունեության այս երկու տեսակների նպատակներից ելնելով՝ նույնպես կարող ենք փաստել, որ տնտեսական գործունեության նպատակներն ավելի լայն են, քան ձեռնարկատիրականինը, քանզի վերջինս անպայման պետք է շահույթ ստանալու նպատակ հետապնդի, և սա պարտադիր պայման է անգամ ոչ առևտրային կազմակերպության համար, որի ստացած շահույթը ոչ թե բաշխվում է կազմակերպության հիմնադիրների (մասնակիցների) միջև, ինչը գործնականում երբեմն օբյեկտիվորեն անհնար է, այլ ուղղվում է կանոնադրությամբ սահմանված նպատակների իրագործմանը: Հետևաբար, ինչպես համոզվում ենք, գործունեության նպատակի տեսանկյունից տնտեսական գործունեության ոլորտը ավելի լայն է, քան ձեռնարկատիրական գործունեությանը:

Ուստի պայմանականորեն կիրառելով հայտնի բանաձևը՝ կարող ենք հանգել եզրակացության, որ ձեռնարկատիրական գործունեության ցանկացած տեսակ իր բնույթով տնտեսական է, մինչդեռ հակառակը պնդել չի կարելի. տնտեսական գործունեության բոլոր տեսակները չեն, որ կարող են համապատասխանել ձեռնարկատիրական գործունեության հատկանիշներին, հետևաբար և համարվել ձեռնարկատիրական: Շարունակելով այս շղթան և հիմնվելով փիլիսոփայության կանոնների վրա, որ որոշակի երևույթները որևէ դասի տեսակ են այն դեպքում, երբ պարունակում են այդ դասին բնութագրական բոլոր հատկանիշները, և դրա հետ միաժամանակ, ունեն առանձնահատուկ հատկանիշներ, որոնց շնորհիվ տարբերվում են մյուսներից, հետևաբար դրանք այդ դասի նկատմամբ հանդես են գալիս որպես տեսակ²⁷, կարող ենք փաստել, որ ձեռնարկատիրական գործունեությունը տնտեսական գործունեության առանձին տեսակ է: Կրկին, առանց նմանություններին անդրադառնալու, ընդգծենք տնտեսական և ձեռնարկատիրական գործունեության տարբերությունները. 1) ձեռնարկատիրական գործունեության դեպքում շահույթ ստանալը նորմատիվային պարտադիր հատկանիշ է, 2) սուբյեկտային կազմի տեսանկյունից ձեռնարկատիրական գործունեությամբ կարող է զբաղվել հատուկ իրավական կարգավիճակ՝ օրենքով սահմանված կարգով պետական գրանցում ստացած սուբյեկտը, իսկ երբեմն նաև՝ արտոնագրված, մինչդեռ տնտեսականի դեպքում դա պարտադիր չէ, 3) տնտեսական գործունեության սուբյեկտների համար միշտ չէ, որ այդ գործունեությունը մասնագիտացված բնույթի է, ինչպես նաև տնտեսական գործունեության համար ռիսկը միշտ չէ, որ իրավական նշանակություն ունի: Հետևաբար, մեր կարծիքով, տնտեսական և ձեռնարկատիրական գործունեությունը հարա-

²⁷ Տե՛ս «Философский словарь». М., 1991, էջ 66:

բերակցվում են որպես դաս և տեսակ, քանի որ, ինչպես հիմնավորվեց, ձեռնարկատիրական գործունեությունը բավարարում է տնտեսական գործունեության բոլոր հատկանիշները և միաժամանակ ունի իր առանձնահատկությունները, որոնցով այն տարբերվում է տնտեսական գործունեությունից և ունի ավելի նեղ կիրառություն:

Ամփոփելով, կարելի է հետևություն անել, որ տնտեսական գործունեությունը սահմանադրաիրավական մակարդակով ճանաչելը և ձեռնարկատիրական գործունեությունը տնտեսական գործունեության տեսակ համարելը արդարացված և հիմնավորված են և, կարծում ենք, կնպաստեն տնտեսական հարաբերությունների պատշաճ իրավական կարգավորմանը:

Բանալի բառեր – *Սահմանադրություն, օրենսդրություն, տնտեսական, գործարարական, ձեռնարկատիրական գործունեություն, իրավունք, կարգավորում*

ДАВИД СЕРОБЯН – Проблема соотношения экономической и предпринимательской деятельности в свете конституционных изменений. – После обретения независимости правовое регулирование экономических отношений претерпело в Армении значительные изменения. Эти изменения носят фундаментальный характер и преследуют цель развития предпринимательства, защиты и поощрения свободной конкуренции в интересах потребителей.

В статье проанализированы теоретические положения действующего законодательства и судебная практика, сопоставлены признаки экономической и предпринимательской деятельности и выявлено их соотношение. В свете недавних конституционно-правовых реформ сделан вывод об обоснованности доктринального и законодательного закрепления предпринимательства как вида экономической деятельности.

Ключевые слова: *Конституция, законодательство, экономическая и предпринимательская деятельность, право, регулирование*

DAVID SEROBYAN – The Issue of Economic and Entrepreneurial Activity Correlation in the Light of Constitutional Changes. – The modern legal regulation of economic relations in the Republic of Armenia has undergone significant changes in comparison with the legal regulation of the same economic relations prior to Armenia's independence. These changes are fundamental and primarily pursue the goal of developing the very economic relations and in particular business relations, protection and promotion of free economic competition for the development of entrepreneurship and consumer protection.

In this article, based on the analysis of theoretical provisions, current legislation and judicial practice, an attempt is made to identify the correlation of economic and business activities, comparison of signs of economic and entrepreneurial activity. In the light of the constitutional and legal reforms recently carried out in the Republic of Armenia, the author concludes that doctrinal and legislative establishment of entrepreneurial activity as a type of economic activity is reasonable.

Key words: *Constitution, legislation, economic, business, activity, law, regulation*

ԿՐԻՄԻՆԱԼՈԳԻԱ

ԱՆՉԱՓԱՀԱՍԻ ՀԱՆՑԱՎՈՐ ԿԱՄ ՇԵՂՎՈՂ ՎԱՐՔԱԳԾԻ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՄՈՏԻՎԱՑԻՈՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԱՆՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հանցանք կատարած անձի կրիմինալոգիական բնութագրի ուսումնասիրությունը ենթադրում է նրա ինչպես սոցիալ-ժողովրդագրական, սոցիալ-դերային, այնպես էլ հոգեբանական ենթակառուցվածքների վերլուծություն: Անձի ո՛չ սոցիալական կարգավիճակը, ո՛չ սոցիալական դերերը և ո՛չ էլ հանցավոր վարքագծի դրսևորման պատճառ դարձող օբյեկտիվ կամ սուբյեկտիվ այլ գործոնները չեն կարող հանգեցնել հանցանքի կատարման՝ առանց այդ անձի հոգեկան ոլորտով անցնելու, հոգեբանական կարգավիճակ ձեռք բերելու: Ուստի հանցավոր վարքագծի դրսևորման իրական պատճառները պարզելու համար անհրաժեշտ է բազմակողմանի վերլուծության ենթարկել հանցանք կատարող անչափահասի սոցիալ-հոգեբանական բնութագիրը, ինչը ենթադրում է նրա պահանջումներին, շահերին, արժեքային կողմնորոշումներին, իրավագիտակցության, անձնային բնութագրիչ հատկանիշների ուսումնասիրություն:

Մարդու վարքագծի, այդ թվում նաև հանցավոր վարքագծի դրսևորման գործոնների համակարգում առաջատար դերը պատկանում է պահանջումներին և շահերին: Հոգեբանությունը պահանջումները դիտարկում է որպես անձի ակտիվության աղբյուր, շարժիչ ուժ, որոշակի կարիք, որն արտացոլվելով նրա գիտակցության մեջ, առաջացնում է դրա վերացմանն ուղղված մղում¹: Իսկ շահը անձի ներքին վերաբերմունքն է օբյեկտի հանդեպ, որոշակի անձի համար այդ օբյեկտի կենսական կարեւորությունն ու հուզական գրավչությունը²: Պահանջումները և դրանց հիման վրա առաջացող շահերը հանցավոր վարքագծի շարժառիթները ձևավորող հոգեբանական հիմնական երևույթներն են:

Մարդու պահանջումները բազմաթիվ են, սակայն պայմանականորեն դրանք բաժանվում են 5 խմբի՝ ա) ֆիզիոլոգիական (սնվելու, սեռական և այլն), բ) անվտանգության (պաշտպանություն ցավից, վախից, ցրտից և այլն), գ) սոցիալական շփման (սիրտ, քնքշության, սոցիալական

¹ Տե՛ս **Петровский А. В., Ярошевский М. Г.** Теоретическая психология. М., 2001, էջ 129, **Немов Р. С.** Психология. М., 2001, էջ 672, **Рубинштейн С. Л.** Основы общей психологии. СПб., 2002, էջ 522:

² Տե՛ս «Механизм преступного поведения». М., 1981, էջ 53-57:

նույնականացման, միավորման և այլն), դ) սեփական անձի հանդեպ հարգանքի (համակրանքի, ճանաչման հասնելու և այլն), իսկ ամենաբարձրը ինքնաիրացման պահանջմունքն է (իր հնարավորությունների և ունակությունների իրացման, ուրիշի կողմից ընկալման և այլն)³:

Հանցավոր վարքագիծ դրսևորող անձանց, այդ թվում անչափահասներին, որպես կանոն, բնութագրական է կենսաբանական, նյութական պահանջմունքների գերակայությունը հոգևորի նկատմամբ. հանցավոր վարքագիծ դրսևորած անձանց ճնշող մեծամասնության համար ՀՀ-ում ներկա ժամանակաշրջանում երջանիկ կյանքի կարևորագույն նախադրյալներից մեկը նյութական ապահովվածությունն է: Ինչ վերաբերում է հոգևոր արժեքներին հաղորդակցվելու, ստեղծագործելու, ինքնակատարելագործվելու պահանջմունքներին, ապա դրանք հետին պլան են մղվում ինչպես հանցանքներ կատարած անձանց, այնպես էլ օրինապահ քաղաքացիների մեծ մասի կողմից⁴: Հոգևոր արժեքներին հաղորդակցվելու տարբերակներից մեկը գիրք կարդալն է, ֆիլմեր դիտելը, սակայն «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում պատիժ կրող դատապարտյալների հետ անցկացված հարցազրույցները վկայում են, որ վերջիններիս առավելապես հետաքրքրում են ոչ թե գեղարվեստական բարձրարժեք ստեղծագործությունները, այլ մարտական ֆիլմերը, հանցավոր կյանքին վերաբերող գրքերը:

Պահանջմունքների նման բաշխումը պայմանավորված է հասարակության կյանքի տարբեր ոլորտներում տեղ գտած այնպիսի փոփոխություններով, ինչպիսիք են՝ բնակչության հիմնական զանգվածի աղքատացումը, նյութական միջոցների ձեռքբերման օրինական հնարավորությունների սահմանափակությունը, համատարած գործազրկությունը, սպառողական կողմնորոշումների տարածումը: Օրվա ապրուստի հայթայթման, իրենց սոցիալական կարգավիճակի պահպանման խնդրի լուծումն այնքան հրատապ է հասարակության անդամների համար, որ հոգևոր պահանջմունքների բավարարումը նրանց զգալի մասի համար դառնում է երկրորդական: ՀՀ դատական տեղեկատվական «DATALEX» վեբկայքում տեղադրված դատավճիռների ուսումնասիրությունը ևս ցույց է տալիս, որ վերջին տարիներին անչափահասների կողմից գողությունների առարկա են լինում հիմնականում սնունդը, ծխախոտը կամ հագուստը:

³ Տե՛ս Хеккхаузен Х. Мотивация и деятельность. М., 1986, т. 1, էջ 114:

⁴ Նման օրինաչափություն գրանցվել է նաև նախկինում կատարված ուսումնասիրությունների ժամանակ. մասնավորապես՝ շահադիտական-բռնի մոտիվացիայով հանցագործությունների համար պատիժ կրողների 94 և օրինապահ քաղաքացիների 91 %-ը կարևորել են նյութական բարեկեցությունը, ընդ որում՝ այդ պահանջմունքը դատապարտվածների 47 %-ի համար ունեցել է առաջնային նշանակություն: Մինչդեռ հոգևոր պահանջմունքները կարևորել են օրինապահ քաղաքացիների 17 և դատապարտյալների 12 %-ը (մանրամասն տե՛ս Ա. Մարգարյան, Շահադիտական-բռնի մոտիվացիայով հանցանքներ կատարած անձանց սոցիալ-հոգեբանական բնութագիրը, «Պետություն և իրավունք», թիվ 2 (16), Եր., 2002, էջ 78-88):

Կենսաբանական մակարդակի, օրինակ՝ սննդի կամ ինքնապահպանման պահանջմունքները դժվար են վերահսկվում, քանի որ դրանք հաճախ դրսևորվում են բնագոյային մակարդակում, հետևաբար դա հնարավոր է միայն ուժեղ կամք ունենալու պարագայում: Մինչդեռ ավելի բարձր մակարդակի՝ անձի ինքնագիտակցության հետ կապված պահանջմունքները առավել հեշտ վերահսկելի են⁵:

Այս առումով առանձին հետաքրքրություն է ներկայացնում անչափահասների ինքնավերահսկման մակարդակի ուսումնասիրությունը: Կրիմինալոգիական բազմաթիվ ուսումնասիրություններ ցույց են տալիս, որ անչափահասների հանցավոր վարքագիծը հիմնականում ունի իմպուլսիվ բնույթ, այսինքն՝ տեղի է ունենում պահի ազդեցությամբ⁶: Հետևաբար նման իրավիճակներում ինքնավերահսկումը կարևոր գործոն է հանցավոր կամ շեղվող վարքագծի դրսևորումից անչափահասների գերծ մնալու համար:

Անչափահասների ինքնավերահսկման մակարդակի և շեղվող վարքագիծ դրսևորելու միջև կապը գնահատելու նպատակով Կրիմինալոգների եվրոպական միության նախաձեռնությամբ 30-ից ավելի երկրներում, այդ թվում՝ ՀՀ-ում, 2014 թ. իրականացված ISRD-3 հետազոտության շրջանակներում հարցման ենթարկվեցին 12-17 տարեկան դպրոցականներ:

Անչափահասների ինքնավերահսկման մակարդակը ուսումնասիրվել է երկու կտրվածքով՝ ռիսկային վարքագծի դիմելու պատրաստակամություն և հեղոնիստական⁷ պահանջմունքների բավարարում:

Ուշագրավ են այդ առումով ՀՀ-ում ստացված արդյունքները, որոնք վկայում են, որ մեզ մոտ մեծ թիվ են կազմում այն երեխաները, որոնք իրենց վարքագիծն իրականացնում են պահի ազդեցությամբ (69 %): Ընդ որում՝ հարցվածների 79.1 %-ը նշել է, որ սիրում է փորձել իրեն և պատրաստ է ռիսկի դիմելու:


ՀՀ-ում հարցված երեխաներին (65.8 %) ավելի շատ հուզում է, թե իրենց հետ ինչ կկատարվի մոտ ապագայում, այլ ոչ թե հետագայում: Ուշագրավ է, որ ՀՀ-ում նկատվում է նույն միտումը, ինչ նախկին Հարավսլավիայի երկրներում, մինչդեռ, օրինակ, Շվեյցարիայում երեխաները որևէ վարքագիծ դրսևորելիս առավել պատասխանատու են մտնում դրա հետևանքներին, իրենց ապագային:

⁵ Տե՛ս Կудрявцев В. Н. Борьба мотивов в преступном поведении. М., 2007, էջ 12:

⁶ Տե՛ս Брижак З. И., Волочай С. Н. Характеристика преступлений несовершеннолетних и её значение для повышения эффективности расследования // "Наука и образование: хозяйство и экономика; предпринимательство: право и управление", 2011, № 1 (7), էջ 100-103, **Wikstrom P., Svensson R.** When does self-control matter? The interaction between morality and self-control in crime causation. //European Journal of Criminology, 2010, Volume 7, number 7, էջ 404, **Wikstrom P., Trieber K.** The role of self-control in crime causation: Beyond Gottfredson and Hirschi's General theory of Crime. //European Journal of Criminology, 2007, Volume 4, number 2, էջ 237:

⁷ Հեղոնիզմը էթիկայի փիլիսոփայական ուղղություն է, որը հաճույք ստանալն ու ուրախանալը դիտում է որպես բարձրագույն արժեք և երջանկության նախապայման:

Ինձ ավելի շատ հուզում է, թե ինձ հետ ինչ կկատարվի մոտ, քան հեռու ապագայում (ISRД-3)



Հոգեբանության մեջ ժամանակի ընկալումը կարևոր նշանակություն ունի, քանի որ այն ազդում է անձի արժեքային համակարգի, մոտիվացիայի ձևավորման, վարքագծային մոդելի ընտրության վրա⁸: Դա հատկապես կարևորվում է տարբեր տարիքային խմբերում. երեխաների համար ապագան շատ անորոշ է և հեռու, մինչդեռ մեծահասակների համար այն շատ մոտ է: Սակայն ճգնաժամային իրավիճակներում, ֆրոստրացնող իրադրություններում (պատերազմ, սոցիալ-տնտեսական ճգնաժամ, օտարում ընտանիքից, կյանքի պլանների ձախողում և այլն), անձն առավելապես կողմնորոշվում է դեպի մոտ, քան հեռու ապագա⁹:

Թեև ՀՀ անչափահասների շրջանում բարձր է ռիսկի դիմելու պատրաստակամությունը, սակայն դա զուտ հաճույքի համար անելն ընդունելի է հարցվածների միայն 44.1 %-ի համար: Գրեթե նույն համամասնությունն է (41.9 %) արկածներին ու աղբյուրներին, քան անվտանգությանը կարևորություն տալու հարցում:

Վերջին տվյալները հաստատում են Յու. Անտոնյանի այն տեսակետը, որ անչափահասներին, հատկապես դեռահասներին բնորոշ են արկածախնդրությունը, սուր զգացողություններ ապրելու, անհավանական իրադրություններում հայտնվելու ձգտումը, որտեղ իրենք կա-

⁸ Տե՛ս **Квасова О.** К современному состоянию проблемы временной перспективы личности // "Историческая и социально-образовательная мысль", 2012, № 5 (15), էջ 138:


⁹ Տե՛ս **Музыкаев К.** Переживание времени в период кризисов // "Психологический журнал", 1999, т. 2, № 4, **Миско Е. А., Тарабрина Н. В.** Особенности жизненной перспективы у ветеранов войны в Афганистане и ликвидаторов аварии ЧАЭС // "Психологический журнал", 2004, № 3:

րող են ի ցույց դնել իրենց խիզախությունը, ֆիզիկական ուժն ու ճարպկությունը¹⁰: Նրա կարծիքով, դեռահասների մի մասը այդ պահանջմունքները բավարարում է սպորտով զբաղվելով, իսկ նման հնարավորություն չունեցողների մի մասը՝ հանցավոր վարքագիծ դրսևորելով:

ISRD-3 ուսումնասիրության շրջանակներում հարցված անչափահասների՝ ռիսկի դիմելու պատրաստականության և նրանց շեղվող վարքագծի դրսևորման հաճախականության համադրումը վկայում է, որ այդ երկուսի պարագայում առկա է կոռելյացիա. ռիսկի դիմելու բարձր մակարդակ ունեցողները գրեթե 2 անգամ ավելի հաճախ են շեղվող վարքագիծ դրսևորել, քան ռիսկի դիմելու ցածր մակարդակ ունեցողները:

Գծապատկեր 2

Ռիսկի դիմելը և շեղվող վարքագիծը (ISRD-3)



Սակայն այդ կոռելյացիան չի նկատվում, երբ առնչությունը վերաբերում է ոչ թե սոսկ շեղվող, այլ սեփականության դեմ ուղղված կամ բռնի հանցավոր վարքագծին: Ռիսկի դիմելու թե՛ բարձր, թե՛ ցածր պատրաստություն ունեցող անչափահասների շրջանում հանցավոր ոտնձգությունների հաճախականությունը դրսևորվել է գրեթե նույն համամասնությամբ՝ սեփականության դեմ՝ 1.3 և 1.9 %, բռնի ոտնձգությունների՝ 3.1 և 3.1 %:

Ստացված տվյալների վերլուծությունից հետևում է, որ ռիսկի դիմելու երեխաների պատրաստականությունը դրսևորվում է միայն շեղվող վարքագծի առանձին տեսակների դեպքում, հատկապես՝ վանդալիզմի, գրաֆիտիի, խմբային կոռիվների, մինչդեռ անձի առողջությանը վնաս հասցնելու, կողոպուտ կամ ավազակային հարձակում կատարելու պարագայում այն էական ազդեցություն չունի, և այստեղ առավել վճռորոշ են դառնում անչափահասի անձի սոցիալ-հոգեբանական այլ առանձնահատկությունները:

¹⁰ См. у Антоныя Ю. М. Личность несовершеннолетнего преступника // "Вестник Всероссийского института повышения квалификации сотрудников Министерства внутренних дел Российской Федерации", 2013, № 2 (26), էջ 3-9:


Նման վիճակը թերևս բացատրվում է երեխաների կողմից իրենց վարքագծի համար պատասխանատվության ենթարկվելու հնարավորության գնահատմամբ. գրաֆիտիի, վանդալիզմի, խմբային կռիվների պարագայում նրանք իրատեսական չեն համարում, որ իրենց ծնողները թույլ կտան իրենց երեխաներին պատասխանատվության ենթարկել, մինչդեռ առավել լուրջ իրավախախտումներ կատարելիս նրանք վստահ չեն, որ ծնողները հաջողության կհասնեն իրենց պատասխանատվությունից ազատելու հարցում:

Պատահական չէ, որ երեխաների ավելի մեծ զանգվածին է հուզում, թե սեփական վարքագիծը իրենց վրա ինչպես կանդրադառնա ապագայում: ISRD-3 ուսումնասիրության շրջանակներում ՀՀ-ում հարցման ենթարկված անչափահասների 27 %-ը նշել է, որ իրենց չի անհանգստացնում, թե իրենց վարքագիծը ինչ հետևանքներ կունենա հետագա կյանքի վրա, այլ կարևորում են հաճույք ստանալը: Միաժամանակ, ՀՀ երեխաները կարևորում են սեփական կարիքների բավարարումը՝ առանց ուրիշներին վնասելու (72.7 %), հոգեկան հուզմունք պատճառելու (73.9 %), նրանց համար խնդիրներ ստեղծելու (81.6 %):

Ակնհայտ է, որ անչափահասների մեծ մասին բնութագրական է ուրիշների զգացմունքները, իրավունքներն ու շահերը չտոնահարելու ցանկությունը: Այլ խնդիր է, որ երեխայի ցանկությունը և փաստացի կատարածը կարող են չհամընկնել. երեխաները միշտ չէ, որ գիտակցում են ուրիշներին վնաս կամ տառապանք պատճառելու հանգամանքը՝ իրենց տարիքային առանձնահատկությունների, կենսափորձի և երևույթները քննադատական վերլուծության ենթարկելու ունակությունների պատճառով:

Գծապատկեր 3

Հեղոնիստական մոտեցումը և շեղվող վարքագիծը (ISRD-3)



ISRD-3 հետազոտության շրջանակներում գնահատվեց հեղոնիստական հակվածության մակարդակի և շեղվող վարքագծի միջև կապը:

Առկա է ուժեղ արտահայտված կոռեյացիա հեղոնիստական հակվածության բարձր մակարդակի և շեղվող վարքագծի միջև:

Էական տարբերություն չի գրանցվել հեղոնիստական հակվածության բարձր և ցածր մակարդակ ունեցող անչափահասների կողմից սեփականության դեմ ուղղված ոտնձգությունների կատարման առումով (1.5 և 1.3 %), սակայն բացահայտվել է, որ նման հակվածության բարձր մակարդակ ունեցող երեխաների խմբում գրեթե 2 անգամ ավելի հաճախ է բռնի վարքագիծ գրանցվել (4 և 2.3 %):

Վերջին բացահայտումը հաստատում է կրիմինալոգիական գրականության մեջ արտահայտված այն տեսակետը, որ բռնի վարքագիծ դրսևորած երեխաներին բնորոշ է բարձր հուզականությունը, հուզական անկայունությունը, էմպատիայի ցածր մակարդակը¹¹:

Ակնհայտ է, որ անչափահասների կամային ոլորտը, ինքնավերահսկումը և հատկապես հեղոնիստական գաղափարներին հետևելը ՀՀ-ում մեծ ազդեցություն են ունենում նրանց շեղվող վարքագծի վրա: Ընդ որում՝ ինքնավերահսկման ցածր մակարդակը առավելապես ազդում է բռնի վարքագծի դրսևորման վրա:

Հանցավոր վարքագիծ դրսևորած անչափահասի անձի ուսումնասիրության կարևոր բաղադրիչներից են նրա արժեքային համակարգն ու կողմնորոշումները հատկապես ներկա ժամանակաշրջանում, երբ հասարակական կյանքի տարբեր ոլորտներում տեղ գտած բեկումնային փոփոխությունները հանգեցրել են հասարակության արժեքային համակարգի անորոշության, մի շարք արժեքներ վերացել են, և փոխարենը հայտնվել են այնպիսիք, որոնք անընդունելի են նախկին արժեքային համակարգով դաստիարակություն ստացած անձանց համար:

Հասարակությունում գոյություն ունեցող տարաբնույթ հայացքներից, գաղափարներից, սկզբունքներից, վարքագծի նորմերից և կանոններից անձն ընդունում է միայն նրանք, որոնք առավելապես համապատասխանում են իր սոցիալական փորձով ձևավորված ներքին դիրքորոշմանը: Այդ արժեքներով էլ նա ղեկավարվում է իր և այլ անձանց վարքագիծը և իրականությունը գնահատելիս¹²:

Արժեքային կողմնորոշումներով է պայմանավորված նաև ցանկալի նպատակին հասնելու համար անձի կողմից դրսևորվող վարքագծի որոշակի, այդ թվում հանցավոր տարբերակի ընտրությունը:

Հասարակության ճգնաժամային փուլերում, երբ տեղի է ունենում

¹¹ Տե՛ս **Грудинин Н. С., Галынская Д. С.** Личность несовершеннолетнего преступника // "Вестник Уральского финансово-юридического института", № 4(6)/2016, էջ 7, **Ратанина О. В.** Самоконтроль, импульсивность, агрессивность и эмпатия как факторы делинквентного поведения подростков // «Молодёжь третьего тысячелетия». Сборник научных статей. М., 2016, էջ 683-685:

¹² Տե՛ս **Тарарухин С. А.** Преступное поведение (социальные и психологические черты). М., 1974, էջ 26-30, **Аракелян С.** Криминологическая характеристика лица, совершившего убийство в Республике Армения // «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն», 2015, № 2 (17), էջ 18:

արժեքային համակարգի վերագնահատում, և այն դեռևս կանոնակարգված չէ, լուրջ խնդիրներ են ծագում անչափահասների արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացում¹³։ ընտանիքում, ուսուցիչների շրջանում արժեքային համակարգի վերաբերյալ կայուն պատկերացումների բացակայությունը, ծնողների, ուսուցիչների կողմից կարևորվող և երեխաներին ուսուցանվող, սակայն նոր սոցիալական իրողությունը չհամապատասխանող, ուստի կիրառություն չգտնող վարքագծային նորմերը, սկզբունքներն ու գաղափարները երեխայի մոտ ձևավորում են անորոշություն, անվստահություն իրեն փոխանցվող արժեքների կարևորության վերաբերյալ, որոնք հանգեցնում են կյանքի իմաստի, նշանակության, հայրենասիրության, հոգևոր ոլորտի հիմնարար արժեքների մերժման։

Եթե նախկինում երեխայի արժեքային համակարգում, մասնավորապես արժեք-նպատակներում առաջնային տեղ էր տրվում ընտանեկան երջանկությանը, այնուհետև՝ կրթությանը, ընկերական լավ միջավայրի ձևավորմանը, ապա ներկայումս՝ նյութական բարեկեցությանն ու բարօրությանը։

Այսպես, 2006 թ. ՀՀ 12-17 տարեկան դպրոցականների շրջանում մեր իրականացրած ուսումնասիրության արդյունքների համաձայն՝ նյութական միջոցների առկայությունը անչափահասների շրջանում կարևոր արժեք է, հարգանքի արժանանալու նախապայման, ինքնահաստատման միջոց։ Դրա անուղղակի վկայությունն է նաև այն, որ նյութապես անապահով ընտանիքների երեխաները գրեթե երկու անգամ ավելի հաճախ են հալածանքի ու ծաղրածանակի ենթարկվում։

Փոփոխվում է նաև անչափահասների արժեք-միջոցների համակարգը. ավանդաբար այդ համակարգում առաջնային էին դիտվում ազնվությունը, ճշտախոսությունը, դաստիարակվածությունը, ինքնատիրապետումն ու հարգանքն այլ անձանց, հատկապես մեծահասակների նկատմամբ։ Մեր իրականացրած ISRD-3 ուսումնասիրության արդյունքները, սակայն, վկայում են, որ ՀՀ-ում այդ արժեքները վերանայվում են. կարևորվում է ձեռներեցությունը, նյութական միջոցների ձեռքբերման նպատակով արդարացվում են խաբեությունը, ընկերներին մոլորեցնելը։ Այսպես՝ «Ի՞նչ էք կարծում, ինչպե՞ս կվերաբերվեն Ձեզ Ձեր ընկերները, մայրը, հայրը, ուսուցիչը, հարևանները, եթե Դուք Ձեր օգտագործած իրը թանկ գնով վաճառեք Ձեր ընկերոջը, իսկ Դուք ավելի մատչելի գնով ձեռք բերեք նորը» հարցին միայն 25.9 %-ն է նշել, որ իր կարծիքով ընկերները կքննադատեն իրեն, 43.8 %-ի կարծիքով՝ ինքը կարժանանա հոր, իսկ 44.3 %-ը՝ մոր պարսավանքին, 34.1 %-ը ուսուցչի, 24.1 %-ը՝ հարևանների քննադատությանը։ Հարցվածների 50 %-ից ավելին չի ընկալում նման վարքագծի բացասական ուղղվածությ-

¹³ Տե՛ս **Волков Б. С.** Психология юности и молодости. Учебник для вузов. М., 2006:

յունը, ինչը թերևս պայմանավորված է նաև հասարակությունում նման երևույթների տարածվածությամբ ու անպատճելիությամբ:

Պատահական չէ, որ հարցված երեխաների 23.9 %-ը նշել է, որ մեծերին խաբելը ամոթալի չէ, ավելին՝ արդարացված է: Ընդ որում՝ շեղվող վարքագիծ դրսևորած անչափահասների շրջանում այդ ցուցանիշը գրեթե երկու անգամ ավելի է:

Ստացված արդյունքները վկայում են նաև, որ երեխայի ասոցիալ վարքի կանխարգելման առումով նշանակություն ունեցող սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունների ձևավորման գործընթացում թուլանում է սոցիալական առանձին կառույցների դերը. եթե ուշադրություն դարձնենք այն սուբյեկտներին, որոնց քննադատությունը երեխան ակնկալում է «ձեռներեցություն» դրսևորելիս, ապա ակնհայտ է, որ նման մոտեցում նա ամենից շատ ակնկալում է ընտանիքից՝ մորից և հորից, ապա՝ դպրոցից, ուսուցչից, հետո միայն՝ ընկերական միջավայրից ու հարևաններից: Առավել հետաքրքիր է հենց վերջին երկու սոցիալական օղակների դերակատարությունը. եթե ընկերների կողմից քննադատություն չակնկալելը հասկանալի է, քանի որ երեխան իրեն լիովին ինտեգրված է զգում այդ միջավայրում, վստահ է, որ ընկերների մեծ մասը իր հետ համամիտ է, ապա հարևաններից քննադատություն չակնկալելը պայմանավորված է մի կողմից՝ երեխայի նկատմամբ վերջիններիս սոցիալական հսկողության թուլացմամբ, մյուս կողմից՝ հարևանների կարծիքի հանդեպ երեխայի անտարբերությամբ:

Անչափահասների հանցավոր կամ շեղվող վարքագծի դրսևորման առումով կարևոր դերակատարություն ունեն ոչ միայն արժեքային կողմնորոշումները, այլև վարքագծի դրդապատճառները, շարժառիթները:

ՀՀ ոստիկանության տեղեկատվական կենտրոնի տրամադրած տվյալները վկայում են, որ անչափահասների կողմից բռնությամբ զուգորդված հանցավոր վարքագիծ դրսևորելու պարագայում կարևոր դերակատարություն ունեն խուլիգանական շարժառիթները: Մասնավորապես, 2003-2015 թթ. ընթացքում սպանությունների 12.1 %-ը իրականացվել է խուլիգանական շարժառիթներով, սակայն անձի առողջությանը դիտավորությամբ վնաս պատճառելու պարագայում այդ շարժառիթը կազմել է ընդամենը 0.9 %: Ընդ որում՝ անչափահասների բռնի վարքագծի դրսևորումները, հատկապես սպանությունները, հաճախ կատարվել են առանձնակի դաժանությամբ (6.1 %-ը):

Ինչ վերաբերում է սեփականության դեմ ուղղված հանցավոր ոտնձգություններին, ապա ուսումնասիրությունները վկայում են, որ անչափահասների կատարած գողությունների մոտ 30 %-ի դեպքում է առկա եղել շահադիտական դրդապատճառը, մինչդեռ մնացած դեպքերում գերակայել են ինքնահաստատման, արկածախնդրության, սուր զգացողություններ ունենալու, խմբից կախվածության, տարիքային

թեթևամտության դրդապատճառները¹⁴: Բիարկե, պետք է նկատի ունենալ, որ ինչպես և չափահասների պարագայում, անչափահասների հանցավոր վարքագիծը ևս պոլիմոտիվացված է, այսինքն՝ միաժամանակ կարող են առկա լինել ինչպես նյութական շահ ստանալու, այնպես էլ ինքնահաստատման կամ ընկերասիրության շարժառիթները:

Անչափահասների հանցավոր վարքագիծը հաճախ պայմանավորված է ինքնահաստատման շարժառիթով: Ուրիշների հավանության արժանանալու, սեփական անձի նկատմամբ հարգանքի, ինքնահաստատման պահանջմունքները բնորոշ են յուրաքանչյուր անձի: Սակայն, եթե օրինապահ քաղաքացիները ձգտում են այդ պահանջմունքները բավարարել աշխատանքում, ուսման մեջ, կյանքում հաջողությունների հասնելու ճանապարհով, ապա հանցավոր վարքագիծ դրսևորող անչափահասները՝ հաճախ բռնություն գործադրելով կամ հափըշտակություն կատարելով: Բռնություն գործադրելու հիմնական պատճառը թերևս այն է, որ չկարողանալով օրինական ճանապարհով հասնել ցանկալի նպատակին՝ նրանք հայտնվում են ֆրուստրացված վիճակում, ինչն էլ հանգեցնում է տագնապայնության և ի վերջո՝ ագրեսիվ վարքագծի: Կրիմինալոգիական ուսումնասիրություններով ևս հաստատվել է, որ հանցավոր վարքագիծ դրսևորած երեխաների շրջանում մեծ է տագնապայնության բարձր մակարդակ ունեցողների քանակը (շուրջ 60 %)¹⁵:

Անչափահասներին բնորոշ են պատասխանատվության անխուսափելիության հանդեպ թերահավատությունը, իրենց վարքագծին ոչ համարժեք գնահատական տալը: Այսպես, ISRD-3 ուսումնասիրության շրջանակներում հարցված անչափահասների 79.2 %-ն է նշել, որ երեխաների կողմից խանութներից կատարվող գողությունը դատապարտելի, ամոթալի երևույթ է, 83 %-ը դատապարտելի է համարել վանդալիզմը, 84.9 %-ը՝ անձի առողջությանը վնաս պատճառելը, 90 %-ը՝ ավազակությունը, շորթումը:

Ընդ որում՝ շեղվող վարքագիծ դրսևորած անչափահասների շրջանում այս հարաբերակցությունը ավելի ցածր է. գողություն կատարած անչափահասների միայն 50 %-ն է ուրիշի ունեցվածքին ապօրինի տիրանալը համարել դատապարտելի երևույթ, անձի առողջությանը վնաս պատճառելը՝ 73.4 %-ը: Փաստորեն, շեղվող կամ հանցավոր վարքագիծ դրսևորած անչափահասները իրենց կատարածի համար մեղքի զգացում հաճախ չեն էլ ունենում, ինչը, ըստ Յու. Անտոնյանի,

¹⁴ Տե՛ս **Ա. Գաբուզյան, Ս. Առաքելյան, Ա. Ղուկասյան, Ա. Մարգարյան** և ուրիշներ, Անչափահասների հանցավորության դեմ պայքարի հիմնախնդիրները ՀՀ-ում, Եր., 2010, էջ 66-86:

¹⁵ Տե՛ս **Пекарь И. В.** Влияние тревожности на противоправное поведение несовершеннолетнего правонарушителя в норме и умственной отсталости // "Актуальные вопросы современной науки", 2009, № 10, էջ 75-80:

ենթադրում է նաև բարոյականության բացակայություն¹⁶: Ընդ որում՝ դրա պատճառը անչափահասի կատարած արարքի սխալ լուսաբանումն է ՋԼՄ-ներով, հանցավոր վարքագիծ դրսևորած երեխային սուկ որպես կյանքի իրադրության գոհ ներկայացնելը, ինչի պատճառով վերջինս իր կատարածի համար մեղավորություն չի գգում:

Ինչպես արդեն նշել ենք, երեխաների շրջանում բարձր է պատասխանատվության անխուսափելիության հանդեպ թերահավատության մակարդակը, որը պայմանավորված է ինչպես իրավապահ մարմինների աշխատանքի թերացումներով, այնպես էլ կոռուպցիայի միջոցով պատասխանատվությունից խուսափելու հնարավորությամբ:

Նման ընկալմանը մեծապես նպաստում է հասարակությունում, այդ թվում՝ դպրոցներում տարածում ստացած այնպիսի երևույթ, ինչպիսին կոռուպցիան է: Ցավոք, երեխաները այդ երևույթին ակննատես, որոշ դեպքերում՝ մասնակից են լինում գրեթե ամեն օր:

2006 թ. դպրոցականների շրջանում մեր իրականացրած ուսումնասիրության շրջանակներում երեխաներին հարցրինք, թե արդյոք իրենք, իրենց ընկերները, ծնողները նվեր տվել են ուսուցչին՝ չվաստակած բարձր առաջադիմություն ապահովելու համար: Հարցվածների 50 %-ը հայտնել էր, որ իրենց ծնողները նման նվերներ տվել են, իսկ 82 %-ի հաղորդմամբ՝ իր ընկերոջ, ընկերուհու ծնողն էր նման կերպ վարվել: Հարցման խմբում ընդգրկված անչափահասների 33 %-ը նշել էր, որ մասնավոր դասերի է հաճախել ուսուցչի մոտ՝ չվաստակած բարձր առաջադիմություն ապահովելու համար, իսկ 76 %-ը՝ համադասարանցիներն են այդ քայլին դիմել:

ISRD-3 ուսումնասիրության շրջանակներում երեխաներին հարցեր ուղղվեցին ուստիկանության գործունեության իրենց ընկալումների մասին. հարցվածների 44.8 %-ի կարծիքով՝ ուստիկանությունը կաշառք է վերցնում:

Կատարված ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել.

1. Ներկա ժամանակաշրջանում հասարակության կարգավորիչ գործառույթի, հասարակական հսկողության թուլացման, կրթական ոլորտում կոռուպցիայի տարածման և դրանով պայմանավորված՝ ուսուցչի մասնագիտության հանդեպ հարգանքի նվազման պարագայում ՀՀ-ում երեխայի ասոցիալ վարքի կանխարգելման առումով նշանակություն ունեցող սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունների ձևավորման գործընթացում նկատվում է դպրոցի և հասարակության դերի նվազում:

2. ՀՀ-ում երեխաների շեղվող վարքագծի, հատկապես հանրային բարձր վտանգավորություն չունեցող ձևերի դրսևորման առումով կարևոր է ինքնավերահսկումը, քանի որ անչափահասը պատրաստ է

¹⁶ Տե՛ս **Антонян Ю. М.** նշվ. աշխ., էջ 3-9:

նիսկային վարքագծի դիմելու և հետևել հեղոնիստական գաղափարներին:

3. ՀՀ հասարակական կյանքում տեղ գտած փոփոխությունների, հատկապես սոցիալ-տնտեսական ճգնաժամային ցնցումների հետևվանքով ներկա ժամանակաշրջանում նկատվում է անչափահասների արժեքային համակարգի անումիա, նյութական պահանջմունքների գերակայություն հոգևորի նկատմամբ, սպառողական հոգեբանության աճ, որոնք բացասաբար են անդրադառնում նաև հանցավոր վարքագիծ դրսևորած անչափահասների մոտիվացիոն ոլորտի վրա:

Բանալի բառեր – *անչափահաս, հեղոնիզմ, ինքնավերահսկում, հոգեբանական բնութագիր, մոտիվացիա, արժեքային համակարգ, շեղվող վարքագիծ, հանցավոր վարքագիծ*

АННА МАРГАРЯН – Социально-психологические и мотивационные особенности преступного или девиантного поведения несовершеннолетних. – Криминологическая характеристика правонарушителя, в том числе и несовершеннолетнего, опирается на анализ его социально-демографических, социально-ролевых и социально-психологических черт. Анализ же предполагает изучение как ценностной системы, мотивационных особенностей личности, так и её самоконтроля.

Исследования, проведённые автором в Армении в рамках международного научного проекта ISRD-3, выявили корреляцию между девиантным поведением и уровнем самоконтроля, а также гедонистскими склонностями несовершеннолетнего. Показаны также основные психологические факторы, влияющие на девиантное или преступное поведение подростков.

Ключевые слова: *несовершеннолетний, гедонизм, самоконтроль, психологическая характеристика, мотивация, система ценностей, девиантное поведение, преступное поведение*

ANNA MARGARYAN – Social-psychological and Motivating Features of Juvenile's Criminal or Deviant Behavior. – The analysis of socio-demographic, role and socio-psychological characteristics of the offender's, including the minor's personality, is a must for the identification of his/her criminological characteristics. The revealing of socio-psychological features of the person can be realized based on the analysis of the value system, the motivational characteristics, as well as the level of self-control, hedonistic inclinations of the personality.

Based on the researches conducted by the author in the Republic of Armenia within the framework of the international scientific project ISRD-3, correlations between deviant behavior and the level of self-control, as well as the hedonistic inclinations of a minor, were revealed.

The author reveals the main psychological factors underlying the deviant or criminal behavior of children in the RA.

Key words: *juvenile, hedonism, self-control, psychological characteristics, motivation, system of values, deviant behavior, violent behavior*

ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԿԱՅՈՒՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԳՐԱՎԱԿԱՆ

ԱՆԱՀԻՏ ՄԱՆԱՍՅԱՆ

Առաջին հայացքից «սահմանադրական զարգացումների սահմանադրականության» գաղափարը կարող է պարադոքսալ հնչել, քանզի կարող է թվալ, թե խոսքը իրավաբանական նույն ուժն ու նշանակությունն ունեցող երևույթների կամ ակտերի մասին է, որ հնարավոր չէ երաշխավորել սահմանադրական փոփոխությունների սահմանադրականությունը, և որ այն անբովանդակ հասկացություն է: Կարծում ենք, սակայն, որ «սահմանադրական զարգացումների սահմանադրականության» գաղափարը սահմանադրականության երաշխավորման կարևորագույն բաղադրատարրերից է, ունի հստակ բովանդակություն և բացառիկ կարևորություն կայուն ժողովրդավարության տեսանկյունից:

